



Հ Ա Ն Գ Ի Ս Ց

ՆՈՐԻՆ ՎԵՅԱՇՆՈՐՀ ՏԵԱՌՆ

Գ Ա Ր Ե Գ Ի Ն Ա. ՅՈՎՍԷՓԵԱՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՄԵԶԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ



ԸՆՏՐՈՒՄԸ 10 ՄԱՅԻՍ 1943, ՎԱՅՈՂԱՆԸ 21 ՅՈՒՆԻՍ 1952

Տարույս յունիս 21ին վախճանեցաւ յԱնթիլիաս (Լիբանան) Կիլիկիոյ վեհաշնորհ կաթողիկոսը Գարեգին Ա. Յովսէփեան, 84 տարեկան հասակին: Իր մահը ընդհանուր ցաւ պատճառեց ոչ միայն Հայութեան, այլ եւ հայագիտական աշխարհին, որովհետեւ եղած էր իր վաստակներով արդիւնալից թէ Ազգին եւ թէ Հայագիտութեան համար:

ԿՆՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԾԵՐ

Հին Ադուանից Ջուանշէր գաւառի Մաղաւուզ գիւղն եղած է անոր առաջին հայրենիքը, ծնած գիւղական յարկի տակ 1867 դեկտեմբերին: Տակաւին մանուկ հասակին մէջ էր ան երբ գաղթեց ծնողքը Մարաղա: Հայրը թէեւ սեւ հողի աշխատաւոր էր, բայց ուզեց որ իր գաւակը հետեւի գրագիտութեան: Երկրագործին չէր յաջողած հունձքը նաեւ Մարաղայի մէջ կարենալ հայթայթելու համար մանկան դպրոցական ծախսերը. նաեւ Անտոն Վ. Վարդազարեան (+ 20 մարտ 1917), Գարեգինի պապեղբայրն մօր կողմէ, որ ստանձնած էր իր թոռնիկին դաստիարակութեան հոգը, նիւթապէս ի վիճակի չէր այս կէտին մէջ ձեռնտու ըլլալու անոր: Այսպէս դպրոցէ դպրոց ընթանալով ի խնդիր ուսման կը ժամանէ պատանին իր 15րդ հասակին: Ի վերջոյ կը բացուին անոր առջեւ Էջմիածնի Գեորգեան շեմարանի դռները (1882 սեպտ.): Ուսումնատենչ երիտասարդը յարատեւ աշխատասիրութեամբ կը յառաջանայ դասարանէ դասարան. 1888 յունիս 17ին, տակաւին Գ. Լսարանի ուսանող, կ'ընդունի սարկաւազութիւնը. իսկ ուսմանց ընթացքը կ'աւարտէ 1890ին: Իր ընկերներէն Գեորգ Չէօրէֆեան (այժմ կաթողիկոս Էջմիածնի) եւ Կարապետ Տէր-Մկրտչեան կը մեկնին Գերմանիա յաճախելու Համալսարան: Գարեգին սարկաւազ ալ կը փափագի հետեւիլ անոնց ֆայլերուն. կային արգելքներ, 16 ապրիլ 1891 կը վախճանի Մակար կաթողիկոս. յաջորդ տարին կաթողիկոսական ընտրութեան համար Էջմիածին կը ժամանէ Մաղափա արքեպ. Օրմանեան, անոր միջնորդութեան կը դիմէ Յովսէփեան: Կաթողիկոսական Տեղապահը կը շնորհէ իր հաւանութիւնը. Կովկասեան Բարեգործական Միութիւնը կը ստանձնէ ծախսերը. 1892ին Գարեգին սարկաւազ կը հասնի բարեաւ Բերլին:

Կը յաճախէ Լայպցիգի եւ Հալէի համալսարանները. կ'աւարտէ ուսմանց ընթացքը 24 յունուար 1897 իբրեւ դոկտորատու ատենադասութեան. կը վերադառնայ Էջմիածին մարտ 28ին, ուր

նոյն տարւոյն նոյեմբեր 30ին կը ստանայ քահանայական ձեռնադրութիւնը. եւ 16 ապրիլ 1917 եպիսկոպոսական օծումը:

Յովսէփեան 1890էն սկսեալ գործած է ձեմարանին մէջ նախ հսկիչ եւ տնտես, ապա ուսուցիչ եւ տեսուչ. միաժամանակ կարգուած վանքին Մատենադարանապետ (1898) եւ Արարատ ամսագրին աշխատակից: 1900 տարւոյն կ'ուղարկուի Թիֆլիս իբրեւ փոխանորդ Առաջնորդարանի: 1901—1904 կը վարէ Երեւանի թեմական Գպրոցի տեսչութիւնը եւ 1905ին կը կարգուի Տեսուչ ձեմարանին: 1906—1907 իր ձեռքն է Արարատի խմբագրութիւնը: Այս միջոցին է որ Ն. Մառ կը ձեռնարկէ պեղումներ կատարել Գառնի. կը մասնակցի այդ աշխատութեանց նաեւ Յովսէփեան: Մառի յանձնարարութեամբ կը բարձրանայ Արագած, ուր երեւան կը բերէ յունարէն արձանագրութիւն մը, որուն ուսումնասիրութիւնը կը կատարուի յաջորդ տարին. Տրդատ թագաւորի մէկ արձանագրութիւնն էր: Յարական Հնագիտ. Ընկերութիւնը կ'անուանէ Յովսէփեանը իսկական անդամ իր Ընկերութեան:

1911ին կ'ուղեւորի նկարիչ Եղիշէ Թաղէոսեանի հետ Երուսաղէմ. նանապարհին կ'այցելէ Տրապիզոն, Կ. Պոլիս, Բէյրութ, վերադարձին Զմիւռնիա: Ուղեւորութեանս նպատակն էր ուսումնասիրել Երուսաղէմի նկարագրող ձեռագիրները: Երկրորդ գիտական արշաւանք մ'ալ կը ձեռնարկէ 1914ին դէպի Բերլին—Կ. Պոլիս—Սամսոն—Ամասիա—Ե. դոկիա—Սեբաստիա. նպատակ ունէր յառաջանալ մինչեւ Խարբերդ եւ Կարին. բայց կը հարկադրուի հանդալէն վերադառնալ. հրատարակուած էր պատերազմ: Երբ կը հասնի Էջմիածին, կը յանձնուի իրեն, այս երկրորդ անգամ, ձեմարանի վարչութիւնը: Պատերազմի տարիներուն օր աւուր նիւթական դժուարութիւններու առջեւ կը գտնուի ձեմարանը. 1917 մարտին Պետրոգրադ կը դեգերէր Տեսուչը նպաստներ հաւաքելու ձեմարանին համար. կը յաջողի բերել հետը 203.000 ռուբլի: Նոյն տարւոյն վերջերը կը փակուի ձեմարանը: Տանկաստանէն հայ փախստականներ ողողած էին արարատեան դաշտը. Գարեգին վարդապետ կը գործէ այժմ իբրեւ նախագահ Եղբայրական, Օգնութեան Յանձնախումբին:

Երեւանի մէջ հայ եւ թուրք քաղաքացիներ ընդհարումի մը առջեւ կը գտնուէին. Յովսէփեան սպիտակ դրօշը ձեռքին կը յառաջանայ դէպի Թուրքերը եւ խղաղութիւնը կը վերականգնէ: Օսմանեան բանակը տիրացած է Կարսի, հայ բնակչութիւնը բնաջնջումի ենթակայ: Աներկիրդ բանագնաց կ'ըլլայ Գարեգին եպիսկոպոս թշնամոյն բանակը՝ փրկանաւորելու համար հայ ժողովուրդը: Սարգսրապատի նակատին կը տեսնենք արի եպիսկոպոսը, որ իրամէ իրամ կը յառաջանայ խրախոյս կարդալու հայ մարտիկներու: Յաղթական կ'ըլլայ հայ բանակը:

1919ին կը հռչակուի Հայաստանի Հանրապետութիւնը: Երեւան կ'ունենայ իր Համալսարանը, Գարեգին եպիսկոպոս կը հրաւիրուի դասախօս հայ արուեստի եւ հնագրութեան: Գիտութեանց Ինստիտուտը կ'անուանէ զանիկա անդամ Ինստիտուտի:

1924ին կը շրջի խորհրդային Միութեան հայկական թեմերը հանգանակութիւն կատարելու ի նպաստ Էջմիածնի: 1927ին կը կարգուի Խրիմի եւ Նոր-Նախիջեւանի թեմին առաջնորդ. եւ 1930ին Անդամ Գերագոյն հոգեւոր Խորհուրդին:

1934ին կ'ուղարկուի արտասահման իբրեւ լիազօր նուիրակ եւ ներկայացուցիչ կաթողիկոսին սփիւռքի մէջ. կ'այցելէ Ռումանիա, Բուլղարիա, Վիեննա, Բերլին, Երուսաղէմ, Սիրիա, Իրակ, Եգիպտոս, Յունաստան, Ֆրանսա եւ Լոնտոն. 1936ին կը հասնի Ամերիկայի Միացեալ Նահանգները, ուր կը գործէ իբրեւ առաջնորդ: Կը հանգանակէ Էջմիածնի նորոգութեան եւ այլ գլուխներէ մեծագումար նպաստներ:

1943, մայիս 10ին կ'ընտրուի կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ եւ կ'օծուի 8 ապրիլ 1945 յԱնթիլիաս եւ կը կառավարէ արուր իմաստութեամբ եւ արդիւնալից:

Գարեգին կաթողիկոս տէր էր ազնիւ ոգոյ եւ կորովի նկարագրի: Ճանչցած եմ զինքը բարեմոյն, ընկերասէր, լայնախոհ, բարեացակամ, անյիշաչար, առատամիտ եւ անչափ հիւրամեծար: Համակ եռանդ էր, գիտէր հրավառել ի բարին իր շրջակայքը, խրախուսել գիտութեան մարդիկը. էր աշխատասէր, ընթերցասէր, ուսումնասէր. համբարած էր մեծ հմտութիւն, յատկապէս հայագիտական մարգերու մէջ: Կը տեսնենք զինքը միջամուխ աստուածաբանական, ազգագրական, պատմագիտական, մատենագրական, հնագրական եւ գեղարուեստական մարգերու մէջ: Մեծանշան մըն էր հայ մշակոյթին արտադրութիւններուն, կը փարէր սիրով անոնց ուսումնասիրութեան: Կը նկատենք զինքը իր ուսումնասիրութեանց մէջ խղճամիտ բանասէր: Արտադրեց շատ բան. բայց նկատի առնելով անոր գրական գործունէութեան 60 տարիները, թերեւս սակաւ երեսայ անոնց թիւը: Պատճառը անոր բազմադիմի գործունէութիւնն է. ան հարկադրուած էր ժամանակի մեծագոյն մասը յատկացնել վարչական գործերու. եւ զարմանք իսկ կը պատճառէ, թէ ի՞նչպէս ան իր եռուզեռ գործունէութեան մէջ պահած էր սէրն ու կորովը գրական լուրջ աշխատանքներու համար:

Գրական ասպարէզի վրայ երեւցաւ ան 1890ին «Գ. Ս.» (Գարեգին Սարկաւազ) ստորագրութեամբ եւ «Ս. Լուսաւորիչ եւ Հայաստանեայց Ս. Եկեղեցի» յօդուածով (Արարատ 1890, էջ 114—129). ուր երեւան կը բերէր աշխոյժ, դատողական միտք, հոետարական կրակ եւ ծանօթութիւն նախնեաց գրականութեան: Այս

նկարագիրը կը նկատուի իր բոլոր արտադրութիւններու մէջ: Երկու տարի ետքը հրապարակ հանեց երկու ժողովրդական վէպ, գրի առնուած Մոկացի պատմողի մը բերնէն: Անոնց յաջորդեց ապա երրորդը. աստի կը հայէին ազգագրութեան. կը թուէր, թէ երիտասարդ Սարկաւազը կը միտէր ազգագրական ճիւղին: Երբ աւարտեց իր համալսարանական ընթացքը, նուիրուեցաւ աստուածաբանական-մատենագրական ուսումնասիրութիւններու. իր ձեռքին տակ կը տեսնենք «Խոսրովիկ Թարգմանիչի» գրութիւնները, գործնք կ'ուսումնասիրէ եւ տպագրութեան կը պատրաստէ: Այս շրջանէն է անշուշտ Գրիգոր Մագիստրոսի Թուրքերուն ուսումնասիրութիւնը քննական հրատարակութեան համար. այս գործը մնաց անտիպ, որովհետեւ կ. Կոստանեան կանխեց հրապարակ հանել իր հրատարակութիւնը: Կը ձեռնարկէ համեմատել Եղիշէի Պատմութիւնը Էջմիածնի ձեռագիրներու հետ եւ տալ ընթերցումներու տարբերակները. այս աշխատութիւնը կ'ընդհատուի անձանօք պատնառով: Ան այժմ հետաքրքրուած է հայ Մանրանկարչութեամբ եւ ձեռագրական Յիշատակարաններու հաւաքածոյով: Ամառնային շրջագայութիւնները Արարատեան դաշտի մէջ կամ Սիւնեաց աշխարհ, կը բանան իր առջեւ նոր հորիզոններ. հարուստ էին այդ կողմերը նախնեաց քարեայ Յիշատակարաններով եւ Յուշարձաններով: Կ'արթննայ իր մէջ ճաշակը գեղարուեստի, շինարուեստի, պատմագիտութեան: Սկսաւ լուսանկարել շինարուեստի յուշարձանները, հաւաքել արձանագրութիւնները եւ նուիրուիլ պատմական եւ պատմաբանական աշխատասիրութիւններու:

Իր ձեռքին տակ կը տեսնենք չորս կարեւոր գործեր.

1. Քարտէս հայ մանրանկարչութեան. հաւաքած էր աւելի քան 1000 մանրանկարչական գործեր բազմազոյն եւ միազոյն: Անոնցմէ մաս մը յանձնած էր 1914ին սկիզբը Բերլինի մէկ գեղարուեստական Տպարանի: Պատերազմի տարիները կը խափանեն հրատարակութիւնը. պատերազմէն ետքը կը ստանայ զանոնք եւ կը յանձնէ Լեւինգրադի Նիւթական Մշակոյթի Պատմութեան Ակադեմիային, որ խոստացած էր հրատարակել: Գործը մնացած է մինչեւ այսօր անտիպ: Հեղինակը շարունակեց աշխատիլ նոյն ուղղութեամբ. տուաւ բազմաթիւ մասնական աշխատութիւններ:

2. Գրչութեան արուեստը հին Հայոց մէջ, որուն Գ. մասը կը կազմէ Քարտէզ հայ հնագրութեան, լոյս տեսած 1913ին 95 տախտակով եւ Ներածութեամբ: Բ. մասն էր հաւանօրէն Քարտէզն հայ մանրանկարչութեան, եւ Ա. մասը՝ Գրչութեան արուեստը, վերջինս, ինչպէս կ'ըսուի, լոյս պիտի տեսնէ յետ մահու Հեղինակին:

3. Յիշատակարանք Չեռագրաց. որուն Ա. հատորը տպագրուեցաւ 1951ին. շարունակութիւնը, որ պիտի հրատարակուի վեց հատորով, մամուլի տակ է:

4. Խաղրակեանք, լոյս տեսած Ա.—Գ. մասերով, պատմական-մատենագրական եւ պատմաբանական մենագրութիւն մըն է, ուր կը փայլի Հեղինակին խղճամիտ աշխատասիրութիւնն եւ անբաւ հմտութիւնը:

5. Մատենագրական ուսումնասիրութիւններ եւ ընագիրներ: Հրատարակեց Խոսրովիկ Թարգմանիչի ամբողջական գործերը. կ'ըսուի թէ հրատարակուած է Ստեփանոս Սիւնեցւոյ Մեկնութիւնն Չորից Աւետարանչաց եւ Եգեկիէլի: Մտադիր էր տալ նաեւ Հիպպոլիտոսի գործերուն հայերէն թարգմանութիւնները: Մատենագրական այլ աշխատութիւնները նշանակած եմ ստորեւ:

Յիշատակ արդարոց օրհնութեամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՆԵՐ

Այստեղ կ'ամփոփեմ որոշ դասաւորութեամբ այն ընդարձակ եւ մանր աշխատութիւնները, գործնք հրատարակած է առանձին հատորով եւ յօդուածաշարքերով զանազան պարբերագիրներու մէջ: Նկատի չեմ առած ոչ-հայագիտական գրութիւնները. ասոնցմէ մաս մը ի մի հաւաքուած է հատորի մը մէջ որ վերնագիր կը կրէ. Դէպի լոյս եւ կեանք, Անթիլիաս 1947:

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆՔ

1. Խոսրովիկ Թարգմանիչ <եւ երկասիրութիւնք նորին> (Ը. դար): Վաղարշապատ 1899—1903, 8⁰, էջ 110 + 210:
Ա. մասը՝ Ներածութիւնը լոյս տեսած է նախ Արարատ 1899, էջ 211—216, 261—264, 315—320, 408—413, 469—480:
2. Պատմութիւն Յովհաննու Մայրագոմեցւոյ: Արարատ 1917, էջ 735—749:
3. Դաւիթ փիլիսոփայի Բան հաւատոյ ընդդէմ հերձուածողաց: Արարատ 1906, էջ 261—272:
4. Դաւիթ փիլիսոփայ (Հարբացի, Ը. դարու մատենագիր): Արարատ 1907, էջ 81—93, 274—289:
5. Դաւիթ Հարբացին եւ Պիտոյից գիրքը: Արարատ 1908, էջ 203—216:
- 5ա. Դաւիթ փիլիսոփայ (Հարբացի), Է. դարու մատենագիր: Արարատ 1916, էջ 898—911:
6. Ստեփանոս Օրբէլեանի մահուան ժամանակի ճշդումը: Պայքար, Նոր տարւոյ բացատիկ, 1947, էջ 9—12:
7. Միսիքար Այրիվանեցի. նորագիտ արձանագրութիւն եւ երկեր: Սիոն 1930, էջ 395. 1931, էջ 18, 50, 118, 148, 184, 214, 237, 277: Արտատպուած՝ Երուսաղէմ 1931, էջ 23:
8. Միսիքար Այրիվանեցու մահուան եւ ձառնարկի գրութեան ժամանակի մասին: Ակօս, ԺԵ (Բէյրութ 1946), 86—90:

- 9. Մխիթար Սամեցի (Կերմանեցի), 1260—1337: Արարատ 1899, էջ 158—167: Արտատպ. Վաղարշապատ 1899, 8^o, էջ 32: Հմմտ. Հանդ. Ամս. 1899, էջ 378—380:
- 10. Նոր նիւթեր թովմա Մեծոփեցու կենսագրութեան: Արարատ 1913, էջ 738—767, 1151—1161. 1914, էջ 67—84: Արտատպ. Թովմա Մեծոփեցու կենսագր. (կենսագրական նոր նիւթերով): Վաղարշապատ 1914, 8, էջ ԼԲ + 31:
- 11. Մկրտիչ Նաղաշի Թուղթը Ֆլորենտինոյ ժողովի առթիւ: Արարատ 1916, էջ 413—423:
- 12. Յովսէփ Սեբաստացի: Արարատ 1918, էջ 226—280:
- 13. Գրիգոր Աղթամարցի: Արարատ 1919, էջ 2—40:
- 14. Նորից Գրիգոր Աղթամարցու մասին: Հանդէս Ամսօրեայ 1930, էջ 42—60:
- 15. Մի նոր պատմագիր [Գրիգոր Դարանաղեցի]: Հովիտ (Նոր-Նախիջեան) 1911, էջ 552:
- 16. Извлечение изъ Исторіи Григорія Камахскаго или Даранагскаго касательно Гарни: Христіанскій Востокъ, 1 (1921) 349—350.
- 17. Հաչազիական այլեւայլք. Ա. [1. Երզնկացի ոգտուել է հոսրովիկ քարգմանչից: 2. Յովհ. Երզնկացու քաղաւածքը Անանիայի Ընդդէմ Թոնդրակեցոց գրուածքից: 3. Աշուղ եւ Նաղաշ Յովնաթանեանների մասին]: Արարատ 1914, էջ 919—926:
- 18. — — Բ. [1. Գրիգոր Շքաշակրի մի նամակը Յովհաննէս Կոլոտին (1733էն): 2. Քահանաների վարձատրութիւնը ԺԳ. (?) դարում: 3. Տրգատի յունարէն արձանագրութիւնը]: Արարատ 1915, էջ 211—219:
- 19. Չեռագրական նորութիւններ. ԱՐՐՏ 1917, էջ 193—198:
- 20. Մեկնութիւն Չորից Աւետարանչաց եւ Մեկնութիւն Եգեկիէլի: Անթիլիաս 1950 (ինձ անմատչելի):
- 21. Յիշատակարանք ձեռագրաց. հատոր Ա. Անթիլիաս 1951, մեծ 8^o, էջ ԻԹ + 1255:
- 21ա. Յիշատակարանք Չեռագրաց (նախնական հաղորդագրութիւն): Հասկ 1949, էջ 78—82:

ՀՆԱԳՐԱԿԱՆՔ

- 22. Գրչութեան արուեստը հին Հայոց մէջ: Մասն Գ. Քարտէզ Էայ հնագրութեան 95 տախտակով: Վաղարշապատ 1913, 8^o մեծ, էջ 52 + 95: Նախ լոյս տեսած՝ Շողակաթ Ս. Էջմիածնի, հայագիտական ժողովածու, Ա., 1913, էջ 170—214 + Ե + Ղ տախտակ:
- 23. Համառօտ գիտելիք հնագրական ալբօմի գործածութեան համար: Էջմիածին 1912, 8^o, էջ 20 (անմատչելի):
- 24. Հայոց գրերի գլխաւոր տեսակները: Տարագ 1912, Թ. 10:
- 24ա. Մատենադարանները հին Հայոց մէջ: Պայքար, բացատիկ 1946, էջ 7—14:

ՄԱՆՐԱՆԿԱՐՁԱԿԱՆՔ

- 25. Ծղրութի հին Աւետարանը [յամէ 974]: ԱՐՐՏ 1898, էջ 519—520:
- 26. Մանրանկարչութեան արուեստը Հայոց մէջ (Լեւոն Գ.ի պատկերի առթիւ): Լումայ 1902, Ա., էջ 194—200 (արտատպ. Թիֆլիս 1902, էջ 7):
- 27. Նախնեաց յիշատակներ [Էջմ. Թ. 369 Աւետարան յամէ 1066]: ԱՐՐՏ 1910, էջ 77—87, 245—260:

- 28. Համառօտ տեղեկութիւններ Էջմիածնի մի քանի մանրանկարների մասին: Անահիտ 1912, Թ. 12, էջ 97—115:
- 29. Մի ձեռագիր Աւետարան (սեպհակաճութիւն Ռաֆայէլ Սքոռայի): Հայաստանեայց Եկեղեցի 1 (1940), 11, էջ 15—29 (գրուած 1237ին Իգնատիոս գրչէ):
- 30. Վախտանգ որդի Ռամեկայ: Սիոն 1933, էջ 19, 49, 84:
- 31. Իգնատիոս մանրանկարիչ եւ Շոթոկանց տոհմը: Սիոն 1933, էջ 176, 216, 238, 311:
- 32. Հաղրատի Դպրոցի մի գլուխ գործոց (Գետաշէնի Աւետարանը): Սիոն 1934, էջ 110, 148, 180, 206, 305. 1935, էջ 124, 188, 279, 311:
- 33. Կոստանդին Ա. կաթողիկոս որպէս հայ մանրանկարչութեան մեծ հովանաւոր. Հայաստանեայց Եկեղեցի 3 (1942), 85—124:
- 34. Գարձեալ Իգնատիոս Հոռոմոսացի մանրանկարչի մասին: Հայաստ. Եկեղեցի, 3 (1942), 358—364:
- 35. Մի կարեւոր ձեռագիր Նիու Եորքի Հանրաշին Մատենադարանում: Նոր Գիր, 6 (1944, Նիու Եորք), 1, էջ 6—24:
- 36. Թէոդորոս գրիչ եւ նկարիչ: Կեանք եւ Գիր տարեգիրք, Գահիրէ 1948, էջ Ա—ԺԶ (նկատի ունի Երուսաղէմի Թ. 1796 Աւետարանը):
- 37. Մխիթար Անեցի գրիչ եւ նկարիչ (գործակցութեամբ Գլաճորի նկարիչ Աւագ դպրի): Հասկ հաչագիտական տարեգիրք, 1 (1948), էջ 192—221:
- 38. Հէքում Ա.ի նկարագրող Աւետարանի մնացորդները: Պայքար նոր տարւոյ բացատիկ, 1949, էջ 7—11:
- 39. Ստեփանոս Վահկացի: Հասկ հայագիտ. տարեգիրք Բ (1949/50), 58—64:
- 40. Երզնկացի մանրանկարչական Դպրոցը (ընդ մամուլ):
- 40ա. Ս. Հայրապետի անդրանիկ կոնդակի զարդանկարչութիւնը, ԱՐՐՏ 1910, էջ 158—162:
- 40բ. Անդրանիկ կոնդակի զարդագրութեան մասին: Հովիտ 1910, էջ 52—53:
- 41. Ս. Էջմիածնի տանարի պատկերագրութիւնը Սիմէոն կաթողիկոսի ժամանակ: Անահիտ 1911, էջ 67—70:
- 42. Էջմիածնի տանարի նկարագրագրումն ու ծաղկազարդումը ԺԵ.—ԺԸ. դարում: Հասկ հայագիտ. տարեգիրք 2 (1949/50), 310—346:
- 43. Նկարիչ Եղիշէ Թադէոսեան: Տարեւ տարեգիրք Ե. (1929), 284—297:
- 44. Եղիշէ Թադէոսեանի էտիւդների ցուցահանդէսը: Անահիտ 1935, Թ. 1—2, էջ 23—29:
- 45. Նկարիչ Մ. Սէրայէան, անդորր խաղաղութեան եւ հեռանկարի երգիչը: Հայաստ. Եկեղեցի, 1 (1940), Թ. 1:
- 45ա. Նկարիչ Սարգիս Խաչատուրեան: Հասկ 1947, էջ 98—100:

ՄԱՆՐԱՐՈՒԵՍԱԿԱՆՔ

- 46. Ոսկերչական արուեստի մի նմուշ ԺԳ. դարում: Խոտակերպ Ս. Նշան: Գեղարուեստ, 4 (1911), 37—44:
- 47. Մի էջ հայ արուեստի եւ մշակոյթի պատմութիւնից: Տարեւ տարեգիրք Զ. (1930, Հալէպ), 194—248 (արտատպ. Հալէպ, 1930, 8, էջ 56):
- 48. Էջմիածնի մեծ խորանի ասեղնագործ վարագոյրը: Անահիտ 1935, Թ. 3—4, էջ 20—24:
- 49. Փիլիպպոս կաթողիկոսի Արծուի գորգը: Հասկ 1945, էջ 221—222:

50. Լուսաւորչի Խաչվառը. հայ ասեղնագործութեան պատմական մի մնացորդ [1448էն]: Սեւան պարբերագիրք գրականութեան եւ արուեստի, 1 (1946, Հալէպ), 70—74:

51. Մանր արուեստի օրինակներ Երուսաղէմի վանքից: Պայքար, Նոր տարւոյ բացատիկ, 1950, էջ 237—253:

52. Բարձրքերդի Աւետարանի ոսկերչական կազմը (Սեպհականութիւն Կիլիկիոյ կաթողիկոսական Աթոռին): Պայքար, բացատիկ 1951, էջ 250—255:

53. Սասանեան Կերպարի կտոր էջմիածնի Թ. 1759 Ն. Ժ. ձեռագրի կազմի մէջ: Հանդէս Ամսօրերայ, 1935, էջ 252—263:

ՇԻՆԱՐՈՒԵՍՏԱԿԱՆՔ

54. Հայ անարարապետութիւնը Սորչիգո՛վսկու նոր աշխատութեամբ: Բանբեր էջմիածնի Գիտ. Ինստիտուտի, 1921, էջ 282—294:

55. Հաւուց Թատի Ամենափրկիչը եւ նոյնանուն յուշարձաններ հայ արուեստի մէջ: Պատմական-հնագիտական ուսումնասիրութիւն: Երուսաղէմ 1937, էջ Ժ + 110:

56. Ազիզբէկէնի եւ նրանց շինարարական գործը (պատմական-հնագիտական ուսումնասիրութիւն): Բանբեր էջմ. Գիտ. Ինստ., 1921, էջ 177—206 (արտատպ., էջ 28):

57. Խաղբակեանի կամ Պոօշեանի Հայոց պատմութեան մէջ: Պատմա-հնագիտական ուսումնասիրութիւն: Մասն Ա., Վաղարշապատ 1928, մեծ 8⁰, էջ ԺԳ + 304: Մասն Բ., Երուսաղէմ 1942/4, էջ 292: Մասն Գ., Նիւ Եորք 1942/3, էջ ԼԱ + 248: Հմմտ. Հանդ. Ամս. 1929, էջ 441—246:

58. Տարապիւն Օրբէլեան եւ Մինախատուի սերունդը: Հասկ հայագիտ. տարեգիրք 1 (1948), 1—28:

59. Потомство Гарсаича Орбеляна и Минахатуны: Христ. Востокъ 2 (1913) 199—215.

60. ԺԳ. դարու ֆաղափական եւ հոգեւոր վերածնութիւնը արեւելեան Հայաստանում: Պայքար, բացատիկ 1944, էջ 57—65:

61. 1. Պողոսական եւ Գմբեթաւորումը նախնական հայ տանարների: 2. Գերեզմանական կոթողներ եւ նրանց հնագիտական արժէքը հայ արուեստի պատմութեան համար: Նիւ-Եորք 1944, էջ 136. տես Թ. 64:

Նաեւ անգլիերէն բարգմանութեամբ (ինձ անմատչելի):

62. Образчики армянскихъ церковныхъ вышивокъ. Христ. Востокъ 5 (1916) 14—21.

63. Սեւանի Առաքելոց վանքին հարաւային դուռը: Անահիտ 1932, Թ. 5—6, էջ 25—41:

64. Նիւքեր եւ ուսումնասիրութիւններ հայ արուեստի եւ մշակոյթի պատմութեան: Պրակ Ա. (արտատպութիւն Թ. 29—31 յօդուածներու): Երուսաղէմ 1935, մեծ 8⁰, էջ Ժ + 76: Պրակ Բ. (արտատպ. Թ. 28, 32, 33 յօդուածներու), Նիւ Եորք 1943, էջ 70: Պրակ Գ. (տես Թ. 61): Նիւ Եորք 1944, էջ 136: Պրակ Դ. Ինքնագրախօսութիւն: Հայաստանեայց Եկեղեցի, 1943, էջ 237—253 (18 պատկերով):

65. Mosaik mit armenischer Inschrift im Norden Jerusalems. Zeitschrift des Deutschen Palestinaverienes, Bd. XVIII.

66. Կոմիտաս կաթողիկոսի մի նոր արձանագրութիւն: Արարատ 1898, էջ 441—442:

67. Նորագիտ հայերէն մի կարեւոր արձանագրութիւն Անքերդի մէջ: Սիւն 1936, էջ 372—374:

68. Die Entstehungsgeschichte des Monothelismus nach ihren Quellen geprüft und dargestellt. Leipzig 1897, 8⁰, էջ 56 (հմմտ. Հանդ. Ամս. 1897, էջ 348):

69. Չագավանից ժողովը: Շողակաթ Ս. էջմիածնի. հայագիտ. ժողովածու, 1913, էջ 22—46:

70. Հին Հայոց դրամներ: Տարագ 1900, Թ. 20, 22:

70ա. Ուշադրութեան արժանի [ի մասին Հ. Հայէջեանի Ռուբենեան դրամներու հաւաքածոյքին, գոր ի նպաստ էջմիածնի գնել կ'առաջարկուի]: Հովիտ 1911, էջ 501:

71. Կաթողիկոսարանի ցուցահանդէսը: Հասկ 1948, էջ 313—317:

72. Գառնիի աւերակները: Հովիտ 1910, էջ 120—122:

73. Անիի ներկայ տարուայ պեղումներից: Հովիտ 1912, էջ 453—454:

74. Մեծամորի ջրհան մեքենան Հայաստանում: Տաքեւ տարեգիրք, Ե (1929), 341—348:

75. Поѣздка въ Іерусалимъ лѣтомъ 1911 года: Христ. Востокъ 1 (1912) 37—40.

76. Մի պտոյտ Երեւանում: Անահիտ 1931, Թ. 1—4, էջ 8—21:

77. Մնեստ կորչում են [Հայաստանի յուշարձանները]: Հովիտ 1912, էջ 679—680:

78. Հնութեան նշխարներ: Տարագ 1909, Թ. 1:

79. Արագածի գագաթին ի խնդիր Լուսաւորչի կանքեղի: Նոր Գիր, 3 (1941 Նիւ Եորք), 1, էջ 1—10, 76—86: Հայաստանեայց Եկեղեցի, 1941, էջ 268, 302—310, (10 պատկերով):

ԱԶԳԱԳՐԱԿԱՆՔ-ՇԻՍԱԿԱՆՔ

80. Սասանայ Ծրեր. Սասունցի Դաւիթ, ժողովրդական վէպի երկու վարիանտներ: Թիֆլիս 1892, 8⁰, էջ 151:

81. Փշրանքներ ժողովրդական բանահիւսութիւնից: Թիֆլիս 1892, էջ 139:

82. Ռոստամ-Չալ, ժողովրդական վէպ (Մոկաց բարբառով): Ազգագրական Հանդէս գիրք Է—Ը (1901), 205—258: (Ուսումնասիրութիւնով), ԺԲ (1904), 5—39: Արտատպ. Թիֆլիս 1905, էջ 52 + 39:

83. Մի հատուած Ռոստամ-Չալ վէպից: Արարատ 1900, էջ 91—94:

84. Սասանայ Ծրերի հազարամեակը: Նոր Գիր, 1939, էջ 131—143: Հայաստ. Եկեղեցի 1940:

85. Ժողովրդական բանահիւսութեան հետքեր միջնադարեան տաղարաններում: Արարատ 1898, էջ 544—551. 1899, էջ 44—47:

86. Ազգայի հաստատութիւնը Հայոց Եկեղեցոյ մէջ: Արարատ 1912, էջ 997—1001:

87. Կաթողիկոսական յուղարկաւորութիւն եւ բաղումն: Ազգագր. Հանդէս, ԺԶ (1907), 205—211:

88. Կաթողիկոսական ընտրութիւն եւ օծումն: Ազգագր. Հանդ. ԺԹ (1910), 189—200:

ԳՐԱԵՕՍԱԿԱՆՔ

89. Հայագիտական տեղեկութիւններ: Արարատ 1900, էջ 151—156, 208—210, 256—258, 592—596:

- 90. Н. Марръ, О расокахъ и работахъ въ Ани лѣтомъ 1906 г. Պետերբուրգ 1907: Արարատ 1908, էջ 329—337:
- 91. Fink-Strzgowski, Atlas zum Katalog der arm. Handschriften. Tübingen 1907). Ազգագր. Հանդ. ԺԷ (1908) 154—160:
- 92. М. Khostikian, David der Philosoph. Berlin 1907. Արարատ 1907, էջ 961—969:
- 93. Ֆ. Մուրատ, Յայտնութիւն Յովհաննու: Երուսաղէմ 1905—1911: Հովիտ 1911, էջ 574—575, 588—590:
- 93 ա. Христианскій Востокъ, I, 1. Հովիտ 1912, էջ 605:
- 94. Յատաչարան Հ. Արմէնի Մեծն Տիգրան գրուածքին, Անթիլիսա 1947. նոյնը Հասկ 1947, էջ 329—331:

ԿԵՆՍՍԱԳՐԱԿԱՆՔ

- 95. Նահապետ եպ. Նահապետեան: Արարատ 1907, էջ 44—50:
- 96. Կարապետ եպ. Տէր-Մկրտչեան: Արարատ 1915, էջ 849—856:
- 97. Մեսրոպ Վ. Մագուղեան: Արարատ 1918, էջ 29—31:
- 98. Կարապետ Կոստանեան: Բանբեր 1921, էջ 314—316:
- 99. Մաղափա արքեպ. Օրմանեան եւ կաթողիկոսական ընտրութիւն: Թիֆլիս 1908, էջ 80 (արտատպ. Հաչրենիֆ օրագրէ Թիֆլիս 1908): Նոյնը Բ. տպ. Թիֆլիս 1911, 80, էջ 54:
- 100. Օրմանեան պատրիարքի յիշատակին: Նոր Օր, բացառիկ քիւ 1942 (Ֆրէզնօ), էջ 3—10 (էջ 5—7 պատմական սրբագրութիւններ Ազգապատումի, Բ., 1803 եւ 1511 էջերուն հաջող):
- 101. Կեանքիս ամենադժբաղդ օրը եւ երջանկութեան ընկեր: Պայքար, բացառիկ 1943, էջ 200—212:

Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ

Հ. ՀՄԱՅԵԱԿ Ժ. Վ. ՀԱՄԲԱՐԵԱՆ ✦

Որո՞ւն անծանօթ է 1909էն ի վեր ի Զմիւռնիա եւ ի Կ. Պոլիս Հ. Հմայեակ Համբարեան, որ իբրեւ գիտուն վարդապետ, ուսուցիչ, տեսուչ եւ մեծաւոր պաշտօնավարած էր 40 տարիներ շարունակ Մխիթարեան վարժարաններու մէջ քրտնաջան: Միաբանութիւնս կը սգայ կորուստը իր արդիւնաւոր անդամին, որ յուլիս 19ին, իր 72 տարեկան հասակին հանգեաւ ի Տէր Կ. Պոլիս: Անոր բարի համբար անգամ մ'ես հանեց ոտք քաղաքին ազգայիններն եւ օտարները յայտնելու իրենց վերջին յարգանքը Հանգուցելոյն, որ դաստիարակն եղած էր անթիւ հայ պատանիներու:



Ան տեսած էր աշխարհի առաջին լոյսը 1881 յուլիս 1ին Կարնոյ քաղաքին մէջ, ընդունելով յաւագանէ Գրիգոր անունը: Տասնուկէս տարեկան հասակին բաժնուեցաւ ան իր ծնողներէն եւ հարազատներէն աշակերտելու Վիեննայի Մխիթարեան Կղերանոցին մէջ, ուր կը հասնի 5 յունուար 1892: Ի բնէ ուշիմ պատանին կը կատարէ յաջողութեամբ իր ուսմանց ընթացքը. 1899 փետրուար 26ին կ'անդամագրուի Մխիթարեան Միաբանութեան, երբ կը ստանայ Հմայեակ անունը. քահանայ կը ձեռնադրուի 12 յունիս 1904: Գործնական կեանքի ասպարէզի վրայ բարգաւանեց ան իր կարողութիւնները նախ իբրեւ ուսուցիչ Մխիթ. Կղերանոցին մէջ: 1907ին կը յանձնուի իրեն «Հանդէս Ամսօրեայ» ուսումնաբերքիս խմբագրութիւնը, զոր կը վարէ մինչեւ 1909: Այս տարւոյն հարկ տեսաւ Միաբանութիւնը ուղարկել զինքը Կ. Պոլիս, ապա Զմիւռնիա եւ դարձեալ Կ. Պոլիս իբրեւ ուսուցիչ: 1914ին ան Զմիւռնիա էր, երբ սկսաւ համաշխարհային պատերազմը, 1921ին կարգուեցաւ Կ. Պոլիս վարիչ Մխիթարեան վարժարանին, ապա նաեւ Մեծաւոր վանատան: Հ. Համբարեան գիտցաւ յետպատերազմեան դժուարին տարիներուն քաջաբար կուրծք տալ ամէն դժուարութիւններու եւ խոհեմութեամբ եւ ճկունութեամբ պահպանել վարժարանին գոյութիւնը. վերածեց իսկ զայն լիկէոնի տարեկան իբր 600 աշակերտներով, եւ վարեց մինչեւ իր կեանքի